ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» դեկտեմբերի 2012թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ, ԼԻՈՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՄԵԾ ԼԻՈՆԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Հաստատել 2012թ. ստորագրված Երևան քաղաքի, Լիոն քաղաքի և Մեծ Լիոնի միջև համագործակցության համաձայնագիրը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ, ԼԻՈՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՄԵԾ ԼԻՈՆԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ելնելով Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանի և Ֆրանսիայի Հանրապետության Լիոնի և Մեծ Լիոնի միջև երկկողմ համագործակցության ակտիվացման անհրաժեշտությունից և նպատակ ունենալով զարգացնել երկկողմ կապերը, անհրաժեշտ եմ համարում վերոնշյալ համաձայնագրի հաստատումը Երևան քաղաքի ավագանու կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ, ԼԻՈՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՄԵԾ ԼԻՈՆԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի, Լիոն քաղաքի և Մեծ Լիոնի միջև համագործակցության համաձայնագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ, ԼԻՈՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՄԵԾ ԼԻՈՆԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու Երևան քաղաքի, Լիոն քաղաքի և Մեծ Լիոնի միջև համագործակցության համաձայնագիրը հաստատելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2012 թվականի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություն չի առաջանա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Երևան քաղաքի, Լիոն քաղաքի և Մեծ Լիոնի միջև

Համագործակցության

Համաձայնագիր

Երևան քաղաքը՝ այսուհետ Երևան քաղաք, տեղակայված Արգիշտի 1 հասցեում ՝ ներկայացված է քաղաքապետ պարոն Տարոն ՄԱՐԳԱՐՅԱՆԻ կողմից

Լիոն քաղաքը՝ այսուհետ Լիոն քաղաք, կամ Լիոն, տեղակայված ..Լա Կոմեդի,, հրապարակում 1 հասցեում, ներկայացված է քաղաքապետ պարոն Ժերար ԿՈԼՈՄԲԻ կողմից, որը Լիոնի Քաղաքային խորհրդի քննարկման արդյունքում ստացել է համապատասխան լիազորություններ

Լիոնի քաղաքային համայնքը՝ այսուհետ Լիոնի քաղաքային համայնք, կամ Մեծ Լիոն՝ տեղակայված III Լիոնի ,, Դու Լաք,, փողոցի № 20 հասցեում ներկայացված է նախագահ պարոն Ժերար ԿՈԼՈՄԲԻ կողմից, որը ստացել է համապատասխան լիազորություններ

Ներածություն

Հաշվի առնելով, որ

տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցությունը հաստատվել և զարգացել է վերջին տարիների ընթացքում, որպես միջազգային համագործակցության եզակի և արդյունավետ միջոց,

ապակենտրոնացված համագործակցությունն այսօր ճանաչված է որպես արդյունավետ գործիք՝ հասնելու համար Յոհանեսբուրգի գագաթաժողովի ժամանակ սահմանված և ՄԱԿ-ի Քաղաքների ու տեղական ինքնակառավարման մարմինների ասոցիացիայի կողմից աջակցություն ստացած Հազարամյակի զարգացման նպատակներին, որի անդամներն են Երևանը, Լիոնը և Մեծ Լիոնը,

ժողովրդավարական կառավարումը և ապակենտրոնացումը նպաստավոր պայմաններ են ստեղծում աղքատության ու անհավասարության դեմ պայքար մղելու, ինչպես նաև Հազարամյակի զարգացման նպատակների իրագործումը և Մարդու իրավունքների պաշտպանությունն /տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները ներառյալ/ ապահովելու համար,

ապակենտրոնացված համագործակցությունը ուղղորդելով տեղական ժողովրդավարական ինքնակառավարումը նպաստում է հանրության զարգացմանը և լավագույնս արձագանքելով մասնավորապես ամենախոցելի խավերի պահանջներին և պաշտպանելով նրանց իրավունքները,

լինելով ժողովրդի կողմից ընտրված լեգիտիմ իշխանությունների ներկայացուցիչներ՝ մեծապես խթանում են տեղական ինքնակառավարման և զարգացման գործընթացները՝ անմիջականորեն մոտ կանգնած լինելով բնակչությանը՝ ընդունակ լինելով համախմբել նրանց հնարավորությունները:

Երևանի և Լիոնի միջև համագործակցությունը սկսվել է 1992 թվականին: Համագործակցության համաձայնագրի առաջին արձանագրությունը ստորագրվել է 1993 թվականի հունիսի 28-ին Երևան և Լիոն քաղաքների միջև՝ հաստատելով վերջիններս պատրաստակամությունը և բարի կամքը Երևանի և Լիոնի միջև գործընկերության զարգացմանը և բազմաբնույթ բնագավառներում հարաբերություններին նպաստելու վերաբերյալ: Այս գործընկերությունը 2004թվականին ընդգրկեց նաև Լիոնի քաղաքային համայնքը, ավելի արդյունավետ կերպով նպաստելու քաղաքային ծառայությունների իրականացման աշխատանքներին: Երևան քաղաքի, Լիոն քաղաքի և Մեծ Լիոնի միջև համաձայնագիր է կնքվել 2008 թվականին երեք տարի ժամկետով, որով պարտավորություններ ստանձնեցին քաղաքային կառավարման և, մասնավորապես հանրային օգտագործման տարածքների բարեկարգման և կանաչապատման բնագավառներում իրականացնել բազմաբնույթ ծրագրեր, ինչպիսին է՝ «Լիոնի այգին» Երևանում:

Այսօր այս համագործակցությունը պետք է ծառայի այն նոր նպատակների իրագործմանը, որոնք մասնավորապես կապված են Հայաստանում իրականացվող ապակենտրոնացման գործընթացների հետ, որոնք իրականցվում են Երևանում 2010 թվականի հոկտեմբերին տեղի ունեցած ֆրանս-հայկական ապակենտրոնացած համագործակցության համաժողովի ոգուն համապատասխան: Երկու քաղաքները ստանձնել են համաժողովի համակարգող կոմիտեի նախագահությունը:

Երևան քաղաքը, Լիոն քաղաքը և Մեծ Լիոնը գիտակցելով այն պատասխանատվությունը և այն խնդիրները, որոնց բախվում են ողջ աշխարհի քաղաքները, ցանկություն էին հայտնել զարգացնել գործընկերության համագործակցությունը, որը կլուծի տեղական ինքնակառավարման մարտահրավերները,

այսպիսով Երևան քաղաքը, Լիոն քաղաքը և Լիոնի քաղաքային համայնքը պարտավորվում են իրականացնել 2011թվականի հուլիսի 12-ին Երևանում

ստորագրված գործընկերության համագործակցության համաձայնագրի արձանագրությունը, որը հենված է հետյալ ռազմավարական ուղղություններով.

- Տեղական ժողովրդավարական կառավարման ամրապնդում
- Սոցիալ-տնտեսական զարգացման խթանում
- Համագործակցության տարաբնույթ ձևերի զարգացում՝ տեղական մարմինների ներգրավմամբ
- Փորձի փոխանակման խթանում և զբոսաշրջության բնագավառներում ծրագրերի իրականացում
- Երկու քաղաքների հաստատությունների միջև մշակութային հարաբերությունների համագործակցության խթանում

Երևան քաղաքը, Լիոն քաղաքը և Լիոնի քաղաքային համայնքը որոշում են **եռակողմ համագործակցություն հիմնել**, որն ընդգրկում է **2012-2013-2014** թվականները, և որի նպատակներն ու պարտավորությունները ներգրավված են սույն համաձայնագրում

Հոդված 1. Համաձայնագրի նպատակը

Սույն համաձայնագրի նպատակն է սահմանել է Երևան քաղաքի, Լիոն քաղաքի և Լիոնի քաղաքային համայնքի միջև համագործակցության եղանակները:

Սույն համագործակցության գլխավոր նպատակն է ամրապնդել Երևան քաղաքի միջամտության հնարավորությունները. հնարավորինս բարելավել հոդված 2-ում նշված բնագավառների ուղղությամբ՝ քաղաքային ծառայությունների որակը բարելավելու համար: Յուրաքանչյուր տեղական ինքնակառավարման մարմին ներգավվում է իր իսկ իրավասությունների շրջանակներում:

Հոդված 2 . Համագործացության բնագավառներ

Լիոն քաղաքը և Մեծ Լիոնը Երևան քաղաքի հետ համագործակցությունը իրականացնում են հետևյալ բնագավառներում՝

Համապատասխանաբար
Լիոն քաղաքի հետ համագործակցության ոլորտները.

- √ Օժանդկություն տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների ոլորտում
- √ Մշակութային կազմակերպությունների և կառույցների միջև կապերի հաստատում
- √ Ֆրանկաֆոնիայի շրջանակներում հարաբերությունների զարգացում
- √ Մշակութային և գեղարվեստական ժառանգության արժևորում
- √ Համագործակցության մեջ ընդգրկված տեղական մարմինների օժանդակություն

Մեծ Լիոնի հետ համագործակցության ոլորտները.

- √ Քաղաքային ծառայություններ
- √ Տրանսպորտ, քաղաքային փոխադրամիջոցներ
- √ Քաղաքային զարգացում և պլանավորում
- √ Տնտեսության և զբոսաշրջության զարգացում

Յուրաքանչյուր բնագավառում համագործակցությունը կանդրադառնա ծառայությունների զարգացման խնդիրներին՝տեխնիկական փորձագիտական և վերապատրաստման միջոցով: Երևան քաղաքը, Լիոն քաղաքը և Լիոնի քաղաքային համայնքը կնպաստեն իրենց տարածքներում գտնվող միության,

տնտեսական, համալսարանական և մշակութային մարմինների ներգրավմանը՝ համագործակցության համաձայնագիրն իրականացնելու նպատակով:

Հոդված 3 Վերապատրաստում և փորձագիտություն

Տեխնիկական և կառուցվածքային աջակցությունը կիրականացվի երկու տիպի իրար փոխլրացնող գործողությունների վրա.

1.Տեխնիկական փորձագիտական առաքելությունների իրականացումը Երևանում: Առաքելությունները հիմնված կլինեն Լիոն քաղաքի և Լիոնի քաղաքային համայնքի քաղաքային ծառայությունների տեխնիկական հմտությունների և ունակությունների վրա՝ Երևան կատարելիք մեկշաբաթյա ուղևորության միջոցով: Փորձագետների առաքելությունների ծրագրավորումը սահմանված կլինի ծախսերի և պարտավորությունների մի փաստաթղթով որտեղ կհստակեցվեն աշխատանքների բնագավառները: Այս նպատակով Լիոն քաղաքը և Լիոնի քաղաքային համայնքը կհամախմբեն իրենց համայնքի մասնագետներին, ինչպես նաև կկարողանան դիմել արտաքին փորձագետներին:
2. Երևան քաղաքի տեխնիկական և վարչական ծառայողների համար կիրականացվեն Լիոն քաղաքի և Լիոնի քաղաքային համայնքի ծառայություններում կամ հատուկ մասնագիտացված կառույցներում վերապատրաստման դասընթացներ:

Հոդված 4. Կողմերի պարտավորությունները

Երևան քաղաքը պարտավորվում է՝

1. Վերապատրաստման համար սահմանել համաձայնագրի շրջանակներում վերապատրաստման համար թեմաները, որոնք նախապես համաձայնեցված կլինեն Լիոն քաղաքի և քաղաքային համայնքի հետ:

2.Ապահովել նյութատեխնիկական անհրաժեշտ միջոցներ և ծառայությունների աշխատանքները՝ փորձագիտական առաքելություններ ընդունելու և իրականացնելու համար:
3. Ապահովել ապագա վերապատրաստվող կադրերի համար ֆրանսերենի իմացության անհրաժեշտ մակարդակ:

Լիոն քաղաքը և Լիոնի քաղաքային համայնքը պարտավորվում են՝

1.Համախմբել իրենց տեխնիկական ծառայությունների հնարավորությունները Լիոնում և Երևանում փորձագիտական առաքելության և կադրերի վերապատրաստման համար, պահանջի դեպքում, ներդրողների շրջանակներում փնտրել ֆինանսական գործընկերներ:
2.Օգտագործել բյուջեով հատկացված ֆինանսական միջոցները, որոնք ներկայացված են սույն համաձայնագրի կից հավելվածում:
3.Օժանդակել Երևանի հետ համագործակցության մեջ ներգրավված ինստիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ մարմիններին:

Հոդված 5 Վերահսկման և գնահատման եղանակները

Յուրաքանչյուր տարեսկզբին նախատեսվող գործողությունները կընդգրկվեն տարեկան ծրագրերի մեջ, որոնք կիրականացվեն Երևան քաղաքի, Լիոնի քաղաքային համայնքի և Լիոն քաղաքի հետ համատեղ և որտեղ կհստակեցվեն յուրաքանչյուր կողմի համար առաքելության բնագավառները, Լիոնում փորձագետների գործուղումների ժամկետները: Երևանի քաղաքապետարանի կադրերի վերապատրաստման կազմակերպումը պետք է իրականացվի Երևանի քաղաքապետի կամ իր ներկայացուցչի պաշտոնական դիմումի հիման վրա:
Երևան քաղաքը, Լիոն քաղաքը և Լիոնի քաղաքային համայնքը յուրաքանչյուր տարեվերջին կներկայացնեն զեկույց, որտեղ կներկայացվեն իրականացված գործողությունները և քաղաքային ծառայությունների ոլորտում դրանց ազդեցության վերաբերյալ և կմշակեն հաջորդ տարվա համագործակցության ծրագիրը:

Սույն համաձայնագրով նախատեսված համագործակցության միջնաժամկետը ու վերջնաժամկետի գնահատումը կիրականացվի Երևան քաղաքի, Լիոն քաղաքի և Լիոնի քաղաքային համայնքի հետ համատեղ: Վերջանական գնահատումը կիրականացվի համատեղ կերպով և յուրաքանչյուր տարեկան ծրագրով սահմանված ցուցիչների հիման վրա:
Եթե որոշակի խախտումներ և ուշացումներ արձանագրվեն իրականացման ընթացքում, ապա համատեղ ջանքեր կձեռնարկեն իրավիճակը շտկելու համար, անհրաժեշտության դեպքում կկազմակերպեն հատուկ գործուղումներ:

Հոդված 6- ֆինանսական միջոցներ

Սույն համաձայնագրին կից ներկայացված է բյուջեով նախատեսված հատկացումների մանրամասն նկարագրությունը

Լիոն քաղաքը պարտավորվում է կատարել հետևյալ ծախսերը.

1.Երևանում մեկ շաբաթ տևողությամբ երկու տեխնիկական գործուղման կեցության և ճանապարհածախսի գումարը կազմում է **տարեկան 13 000€**

2. Լիոնում տաս օր տևողությամբ Երևանից երկու մասնագետների կեցության և ճանապարհածախսի գումարը կազմում է **տարեկան 8000€:**

3.Երևան քաղաքի ծրագրերում ընգրկված համագործակցության մեջ ներգրավված ընկերակցային մարմիններին ֆինանսական աջակցությունը::

Տարեկան գումարը կազմում է **21 000€,** իսկ համաձայնագրով ընդհանուր նախատեսված գումարը՝ **63 000€:**

Լիոն քաղաքի տարեկան ներդրումը բաշխվում է հետևյալ կերպ՝

- **10 000€ ուղղակի** ծախսերը - **5000€** Լիոնում տաս օր տևողությամբ Երևանի երկու մասնագետների գտնվելու ֆինանսավորման համար, **5000€** Երևանում երկու փորձագետների գործուղման համար, որոնց ծախսերը հոգալու համար անհրաժեշտ է լինելու դիմել Լիոն քաղաքի կադրերի բաժնին, որպեսզի հատկացում կատարեն այն ֆինանսական միջոցներից, որոնք նախատեսվում են Լիոնի քաղաքապետարանի ծառայողների համար:
- **11 000 անուղղակի** ծախսերը- Լիոն քաղաքի ծառայողների հավելավճարների համար:

Մեծ Լիոնը պարտավորվում է կատարել հետևյալ ծախսերը.

1. Երևանում երեք տեխնիկական գործուղումների համար նախատեսված մեկ շաբաթ տևողությամբ կեցության և ճանապարհածախսերի գումարը կազմում է **տարեկան 19 500€:**

2.Լիոնում Երևան քաղաքի երկու տեխնիկական գործուղումների տասնօրյա կեցության և ճանապարհածախսերի գումարը կազմում է **տարեկան 8000€:**

3. Համագործակցության միջազգային հարաբերությունների և կապերի վարչության կողմից վերահսկման և իրականացման ծախսերը կազմում են **տարեկան 19 200€** 48 օրվա հաշվարկով:

Տարեկան գումարը կազմում է **46 700€,** իսկ ողջ պայմանագրով նախատեսված գումարը՝ **140 100€** :

Հետևաբար Մեծ Լիոնի տարեկան ֆինանսական ներդրումը բաշխվում է հետևյալ կերպ՝

-12 500€ ուղղակի ծախսերը

- **7 500€** Երևանում 8 օր տևողությամբ 3 տեխնիկական գործուղումների ֆինանանսավորման համար:

- **5 000€** Լիոնում 10 օր տևողությամբ երկու մասնագետների ֆինանսավորման համար:

-34 200€ աննուղղակի ծախսերը

- **15 000€** Մեծ Լիոնի ծառայողների համար հավելավճարներ –Երևանում յուրաքանչյուր 2 շաբաթվա գործուղման համար /մեկ շաբաթ գործուղման և մեկ շաբաթ հաշվետվությունների նախապատրաստման և ներկայացման համար/ և 10 օր Լիոնում Երևանի քաղաքապետարանի աշխատակիցների ընդունելության համար
- **19 200 €** Հավելավճարներ այս համագործակցության հետ առնչվող կազմակերպչական աշխատողների համար:

Երևան քաղաքը պարտավորվում է կատարել հետևյալ ծախսերը.

- Երևանում իրականացվող պաշտոնական և տեխնիկական գործուղումների ընթացքում ներքին տեղաշարժերի ապահովումը
- Թարգմանչական ծախսեր /գրավոր և բանավոր/
- **Տարեկան 5 000€** Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության աշխատավարձերը

Հոդված 7-Լրացուցիչ պայմանագիր

Սույն համաձայնագրի ցանկացած փոփոխություն, ինչպես նաև կողմերից որևէ մեկի դուրս գալու փաստը հիմք կհանդիսանա լրացուցիչ համաձայնագրի կամ հավելվածի մշակման համար:

Հոդված 8- Համագործակցության տևողությունը

Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում այն պահից, երբ Կողմերը ստանում են գործընկերության համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին

գործընթացների կատարման մասին վերջին պաշտոնական գրավոր տեղեկացումը:

Անհրաժեշտության դեպքում այն կարող է չեղարկվել կողմերից որևէ մեկի պահանջով համաձայնագիրը վաղաժամկետ ավարտելու վերաբերյալ հատուկ նամակի միջոցով՝ ներկայացված դադարեցման ժամկետից նվազագույնը 6 ամիս առաջ: Պայմանները, որոնց հիման վրա համաձայնագիրը վաղաժամկետ կդադարացվի, առաջ կքաշվեն կողմերի միջև համատեղ համաձայնագրով: Այս առումով, այս պայմանները կհաստատի համաձայնագիրը դադարեցնող կողմը՝ Լիոնի համապատասխան ինստանցիաների հավանական գնահատականի առկայությամբ՝ ընդունված այս կամ այն կողմից:

ԼԻՈՆ,

Տարոն Մարգարյան

Երևանի քաղաքապետ

Ժերար ԿՈԼՈՄԲ

Լիոնի քաղաքապետ

Հյուբեր Ժուլիեն-Լաֆերիեր

Մեծ Լիոնի փոխնախագահ